# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02
# «ՀՀ-ԲԾ-Ա-ԲՄԾՁԲ-25/105» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ և ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԻ

Քաղ. Երևան 17.10.2025թ.

Գնահատող հանձնաժողովի նիստին մասնակցում էին՝

| | | |
|---|---|---|
| Ա. Խոջոյան | -հանձնաժողովի նախագահ | ՇՄՆ «ԲԾԻԳ» ՊՀ-ի տնօրենի պարտականություններ կատարող |
| Ռ. Շահազիզյան | -հանձնաժողովի անդամ | «Հայաստանի հարմարվողականության ֆինանսավորման ազգային մեխանիզմ» դրամաշնորհային ծրագրի համակարգող |
| Մ.Քիրամիջյան | -հանձնաժողովի անդամ | ՇՄՆ ԲԾԻԳ ՊՀ ծրագրերի իրականացման և մոնիտորինգի բաժնի պետի պաշտոնակատար |
| Դ. Նիկողոսյան | -հանձնաժողովի անդամ | ՇՄՆ ԲԾԻԳ ՊՀ գնումների և գործերի կառավարման բաժնի պետի պաշտոնակատար |
| Լ. Հակոբյան | -հանձնաժողովի «անդամ | «Հայաստանի հարմարվողականության ֆինանսավորման ազգային մեխանիզմ» դրամաշնորհային ծրագրի մոնիտորինգի մասնագետ |

Գնահատող հանձնաժողովի նիստին բացակայում էր՝

| | | |
|---|---|---|
| Ս. Հակոբյան | -հանձնաժողովի անդամ | « Հայաստանում հողերի դեգրադացման կանխման հանձնառությունների/ պարտականությունների իրականացումը՝ դեգրադացված մարգագետինների կայուն կառավարման և վերականգնման միջոցով » դրամաշնորհային ծրագիր գենդերային հարցերով փորձագետ |

**«ՀՀ-ԲԾ-Ա-ԲՄԾՁԲ-25/105» ծածկագրով գնման ընթացակարգի հատերի բացման վերաբերյալ**

«ՀՀ-ԲԾ-Ա-ԲՄԾՁԲ-25/105» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերը բացվել են 2025 թվականի հոկտեմբերի 13-ին ժամը 12:00 www.armeps.am համակարգի միջոցով:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

**Տեղեկություն «ՀՀ-ԲԾ-Ա-ԲՄԾՁԲ-25/105» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման մասին**

2025թ-ի հոկտեմբերի 13-ին «Շրջակա միջավայրի նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գրասենյակում, որը գտնվում է ք. Երևան, Տիգրան Մեծ 65Ա հասցեում, տեղի ունեցավ **«ՀՀ-ԲԾ-Ա-ԲՄԾՁԲ-25/105»** ծածկագրով («Հայաստանի հարմարվողականության ֆինանսավորման ազգային մեխանիզմ» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման) գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը:

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է 6 անդամից, և հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի 5 անդամները, հետևաբար՝ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ա. Խոջոյանը, իսկ քարտուղարն էր՝ Ն. Գիգոյանը:

1. **«ՀՀ-ԲԾ-Ա-ԲՄԾՁԲ-25/105»** ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտ ներկայացրած անձանց, վերջիններիս կողմից ներկայացված հայտի գնահատման և առաջարկված գնի մասին
2. Ընտրված /և հաջորդաբար տեղեր զբաղեցրած/ մասնակից որոշելու մասին
3. Պայմանագիր կնքելու մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին

## 1. «ՀՀ-ԲԾ-Ա-ԲՄԾՁԲ-25/105» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ, ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ և ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահ Ա. Խոջոյանը նիստը հայտարարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկան և այն փաստը, որ գնումը իրականացվում է Գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի 2-րդ ենթակետի ընթացակարգով:

| ***Չափաբաժինների համարները*** | | ***Չափաբաժնի անվանումը*** |
|---|---|---|
| ***համարները*** | ***գնման գինը*** | |
| 1 | 95 000 000 | «Մարզերի կլիմայական խոցելիության գնահատում, կլիմայի հարմարվողականության տարածաշրջանային հանձնաժողովների ձևավորում, տարածաշրջանային քաղաքականության շրջանակի մշակում» խորհրդատվական ծառայություններ |

**«ՀՀ-ԲԾ-Ա-ԲՄԾՁԲ-25/105»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերը բացվել են www.gnumner.am կայքի armeps համակարգի միջոցով հրավերի սահմանված օրը և ժամին՝ 2025 թվականի հոկտեմբերի 13-ին ժամը 12:00: ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով սահմանված հիմնավորումներ չեն ստացվել:

Հայտերի վերաբերյալ պարզաբանում տեղի չի ունեցել:

Հրավերում փոփոխություններ չեն կատարվել, այլ հարցումներ և պատասխաններ չեն գրանցվել:

**«ՀՀ-ԲԾ-Ա-ԲՄԾՁԲ-25/105»** ծածկագրով ընթացակարգին մասնակցելու հայտ/եր/ է/են/ ներկայացրել հետևյալ անձը/ինք/ այսուհետ՝ նաև մասնակիցը/ները/.

| N | Մասնակցի անվանումը | Էլ. փոստ | Հեռախոս | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|
| 1 | «ԲԻ-ԴԻ-Օ Ըդվայզորի» ՓԲԸ | bdo@bdoarmenia.am | 060 528899 | 02675489 |
| 2 | «ՍԻՎԻՏՏԱ ԷՅԷՄ» ՓԲԸ | info.am@civitta.com | +37410546434 | 01557607 |
| 3 | Գլոբալ Ֆակտորս Ինթերնեյշնլ Քնսալթինգ Էս Էլ Յու | icitaciones@globalfactor.com | (+34) 94 424 05 63 | B67855940 |

Հանձնաժողովը արձանագրեց, որ

- Մասնակից/ներ/ը հայտ/եր/ը կազմել և ներկայացրել են **«ՀՀ-ԲԾ-Ա-ԲՄԾՁԲ-25/105»** ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ՝ ընթացակարգ/ հրավերի /այսուհետ՝ հրավեր/ պահանջներին համապատասխան, սակայն կային բացակայող փաստաթղթեր:

- «ՍԻՎԻՏՏԱ ԷՅԷՄ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստաթղթերում բացակայում էր Հայտի ապահովումը՝ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի տեսքով /Հավելված 3/: Ինչպես նաև գնային առաջարկը /Հավելված 2/ չէր համապատասխանում հրավերի պահանջներին: Արձանագրվեց, որ նշված փաստաթղթերը շտկման ենթակա չեն:
- Գլոբալ Ֆակտորս Ինթերնեյշնլ Քնսալթինգ Էս Էլ Յու–ն չէր ներկայացրել աշխատակազմի մասնագիտական փորձի մասին վկայող փաստաթղթերը, սերտիֆիկատները, վկայականները, ինքնակենսագրականները:
- «ԲԻ-ԴԻ-Օ Ըդվայզորի» ՓԲԸ-ի մոտ բացակայում էր աշխատակազմի մասնագիտական փորձի մասին վկայող փաստաթղթերը, սերտիֆիկատները, վկայականները, ինքնակենսագրականները:

Նիստը կասեցվեց 1 աշխատանքային օրով, «ԲԻ-ԴԻ-Օ Ըդվայզորի» ՓԲԸ-ն մասնակցին ծանուցվեց անհամապատասխանության մասին: «ԲԻ-ԴԻ-Օ Ըդվայզորի» ՓԲԸ-ն շտկեց փաստաթղթերը և ներկայացրեց բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

- Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների և մասնակիցների զբաղեցրած տեղերի վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում

| Չափա-բաժնի համար | Մասնակցի/ Участник | | Մասնակիցների առաջարկած գները | | |
|---|---|---|---|---|---|
| | Զբաղեցրած տեղ/ | Անվանում | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գին |
| 1 | 1 | «ԲԻ-ԴԻ-Օ Ըդվայզորի» ՓԲԸ | 79,000,000 | 15,800,000 | 94,800,000 |
| | 2 | «ՍԻՎԻՏՏԱ ԷՅԷՄ» ՓԲԸ | 51,187,500 | 10,237,500 | 61,425,000 |
| | 3 | Գլոբալ Ֆակտորս Ինթերնեյշնլ Քնսալթինգ Էս Էլ Յու | 94,000,000 | - | 94,000,000 |

Որոշվեց Ա. Խոջոյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:
ՍԻՎԻՏՏԱ ԷՅԷՄ» ՓԲԸ-ի հայտը մերժել:
«ԲԻ-ԴԻ-Օ Ըդվայզորի» ՓԲԸ-ի հայտը գնահատել բավարար, քանի որ համապատասխանում է Հրավերի պահանջներին և ներկայացրել է նվազագույն գնային առաջարկ:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

## 2.ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑ/ՆԵՐ/ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Որոշվեց
Որպես ընթացակարգի 1 չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից հայտարարել «ԲԻ-ԴԻ-Օ Ըդվայզորի» ՓԲԸ-ին:

Հանձնաժողովի քարտուղար Ն. Գիգոյանը ներկայացրեց պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Հանձնաժողովի նախագահ՝
Ա. Խոջոյան _____

Հանձնաժողովի անդամներ՝
Ռ. Շահազիզյան _____

Մ.Քիրամիջյան _____

Լ.Հակոբյան _____

Ս. Հակոբյան _____

Դ. Նիկողոսյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝
Ն. Գիգոյան _____